# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/10-1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀՐԱՎԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ 17.05.2019թ. ԿՆՔՎԱԾ N ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/10-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան 21 հունիսի 2019թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կարեն Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Վահե Ավետիսյանի (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 17.05.2019թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/10-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման և ֆինանսական միջոցների առկայությամբ պայմանավորված՝ Պայմանագրի «Վճարման ժամանակացույցը» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված N 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի Հավելված N 1-ը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***«Տիգման Գրուպ» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 | Հասցե՝ ք. Երևան, Մոլդովական 20/40 |
| Հ/Հ՝ 900011025757 | Հ/Հ՝ 2470103264670000 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 00890518 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական գլխավոր տնօրեն | «Արարատբանկ» ՓԲԸ |
| Ղեկավար՝ Կ. Փոլադյան | Տնօրեն՝ Վ. Ավետիսյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| L.S. | L.S. |